ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Հ. Ս., ԵՆՈՔՅԱՆ Ա. Վ.

Մարդու վարքը, գործունեությունը և կեցությունն ընդհանրապես մեծապես պայմանավորված են նրա նախընտրած արժեքներով, արժեքային կողմնորոշմամբ: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեհամակարգի նշանակալի մասը: Բարու, արդարի, հայրենասիրության և բարոյական այլ արժեքների նկատմամբ մարդու վերաբերմունքով է պայմանավորված անձի, հասարակության, պետության ներդաշնակ կենսագործունեությունը, ինչն առավել էական է դառնում քաղաքական, տնտեսական, մշակութային ազատությունների, գլոբալացման և մարդկանց ազատ տեղաշարժերին ու ազատ ընտրության իրականացմանը նպաստող այլ գործոնների առկայության շնորհիվ: Ասվածը ցույց է տալիս բարոյական արժեքների ձևավորման խնդրի կարևորությունը:

Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները և, իհարկե, երեխաների դաստիարկության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը:

Վերջին շրջանում զգալիորեն մեծացել է սովորողների բարոյական արժեքների ձևավորման, բարոյական դաստիարակության խնդրի նկատմամբ ուշադրությունը. կատարվում են գիտական հետազոտություններ, կրթօջախների ուսումնական պլաններում ներառվում են բարոյագիտական բնույթի ուսումնական դասընթացներ, ստեղծվում են հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ: Բավական ընդգրկուն են նմանատիպ աշխատանքների իրականացման աշխարհագրական, կրոնական ու մշակութային շրջանակները:

Անդրադառնանք դրանցից մի քանիսին՝ աչքի առաջ ունենալով տարբեր երկրների փորձը: Անգլիայի ազգային կրթակարգը, օրինակ, սովորողների հոգևոր, սոցիալական, մշակութային, ֆիզիկական և մտավոր զարգացմանը զուգընթաց նախատեսում է նաև բարոյական այնպիսի արժեքների նպատակաուղղված ձևավորում, ինչպիսիք են ճշմարտությունը, արդարությունը,

ազնվությունը, վստահությունը և պարտքի զգացումը[1]*: Համանման խնդիրներ են առաջադրում նաև առարկայական չափորոշիչները: Բացի այդ, սովորողների բարոյական և հոգևոր ներաշխարհի ձևավորմանն է նպաստում «Կրոնական կրթություն» ուսումնական առարկան, որը նախատեսված է կրթական I-IV աստիճաններում (I-XI դասարաններ): Այն ներառում է նաև բարոյական արժեքներին նվիրված զանազան թեմաներ: Օրինակ, III կրթական աստիճանում (VII-IX դասարաններ) ընդգրկված են բարոյական ընտրության, ներողամտության, բարու և չարի, իրավունքի և պատասխանատվության, սոցիալական արդարության և բարոյական այլ արժեքների վերաբերյալ թեմաներ*[2]*:*

Շոտլանդիայում ոչ կրոնական դպրոցների համար պարտադիր է «Կրոնական և բարոյական կրթություն» ուսումնական առարկան, որն ուսուցանվում է սկզբնական դպրոցի I-VII և միջնակարգ դպրոցի I-III դասարաններում: Առարկայական չափորոշիչներով հիմնական խնդիրների շարքում նախատեսվում են նաև սովորողների կարեկցանքի, իմաստության, արադարության և ազնվության մասին գիտելիքների խորացումը և բարոյական այդ արժեքների ձևավորումը[3]*:*

Ռուսաստանի Դաշնությունում պետական կրթակարգն ուղղված է սովորողների հոգևոր-բարոյական զարգացմանը և դաստիարակությանը, քաղաքացիական ինքնության ձևավորմանը, մշակութային բազմազանության պահպանմանը և զարգացմանը, Ռուսաստանի ժողովուրդների հոգևոր և մշակութային արժեքների ճանաչմանը: Այդ նպատակների իրականացմանը նպաստում է «Կրոնական մշակույթի հիմունքներ և աշխարհիկ բարոյագիտություն» ուսումնական առարկան: Վերջինիս «Աշխարհիկ բարոյագիտության հիմունքներ» բաժինը նախատեսում է ուսումնասիրել հետևյալ թեմաները՝ IV դասարան, 17 ժամ. Ռուսաստանը մեր հայրենիքն է, ի՞նչ է աշխարհիկ բարոյագիտությունը, մշակույթը և բարոյականությունը, բարոյականության առանձնահատկությունները, բարին և չարը, առաքինություն և արատ, ազատությունը և մարդու բարոյական ընտրությունը, ազատությունը և բարոյական պատասխանատվությունը, բարոյական պարտք, արդարություն, այլասիրություն և եսասիրություն, ընկերություն, ի՞նչ է նշանակում լինել բարոյական, սովորողների հետազոտական աշխատանքների պաշտպանություն:

---

[1] *http://webarchive.nationalarchives.gov.uk/20130401151715/http://www.education.gov.uk/publications/eOrderingDownload/QCA-04-1374.pdf, p. 10.*

[2] **Նույն** *տեղում, էջ 129:*

[3] *http://www.educationscotland.gov.uk/Images/CurriculumImpactReviewRME_tcm4-826574.pdf, p. 6.*

V դասարան, 17 ժամ. տոհմը և ընտանիքը՝ բարոյական հարաբերությունների աղբյուր, բարոյական արարք, բա-րոյական վարքի ոսկե կանոնը, ամոթ, մեղք և ներողամտություն, պատիվ և արժանապատվություն, խիղճ, բարոյական իդեալ, վարվեցողություն, ընտանեկան տոներ, մարդու կյանքը՝ բարոյական բարձրա-գույն արժեք, սեր հայրենիքի նկատմամբ, հետազոտական աշխատանքի պատ-րաստում, սովորողների ելույթներ հետազոտական աշխատանքի վերաբերյալ, հետազոտական աշխատանքի ներկայացում[4]*: Ռուս մանկավարժներից շատերը մեծ նշանակություն են տալիս նաև մաթեմատիկայի միջոցով սովորողների բարոյական դաստիարակությանը: Որոշ հեղինակների կազմած խնդիրները նվիրված են Հայրենական մեծ պատերազմին, Ռուսաստանի բուսական և կենդանական աշխարհին, որոնք նպաստում են հայրենասիրության, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի, ընկերասիրության և այլ արժեքների ձևավորմանը*[5]*:*

Բարոյական արժեքների ձևավորմանն առանձնապես մեծ տեղ է հատկաց-վում Մալայզիայում: 1983 թ. ի վեր «Բարոյական կրթությունը» հիմնական առարկա է սկզբնական և միջնակարգ դպրոցներում սովորող ոչ մուսուլման աշակերտների համար (մուսուլմանների համար նախատեսվում է «Իսլամական կրթությունը»): Սկզբնական դպրոցում առարկան ուսուցանվում է շաբաթական 3 ժամ, իսկ միջնակարգ դպրոցում՝ 2 ժամ: Համաձայն կրթական չափորոշիչների, այդ առարկայի ուսուցումը սովորողներին հնարավորություն է տալիս հասկանալու և յուրացնելու արժեքներ, որոնք անհրաժեշտ են առաքինի լինելու համար, գիտակցել և ընդունել մարդու և շրջակա միջավայրի ներդաշնակության կարևորությունը, զարգացնել բարոյական և հոգևոր արժեքների վրա հիմնված հասուն մտածողություն, դրանց շնորհիվ կայացնել բարոյական որոշումներ և լուծել խնդիրներ[6]*: Միջնակարգ դպրոցում «Բարոյական կրթություն» առարկայի ուսուցումն ընդգրկում է այնպիսի արժեքներ, որոնք կապված են ինքնազարգացման, ընտանիքի, շրջակա բնության, հայրենասիրության, մարդու իրավունքների, ժողովրդավարության, խաղաղության ու ներդաշնակության*

---

[4] **Данилюк А. Я.** *Основы религиозных культур и светской этики, программы общеобразовательных учреждений, 4, 5 классы, М., 2010, с. 21-22.*

[5] *Տե՛ս http://festival.1september.ru/articles/579598/ http://www.gumer.info/bibliotekBuks/Culture/Hinchin/Hinchin_MatemObrazov.phphttp://kursk-sosh52.ru/obychenie /bibliot-statei/1-joomla.html*

[6] *http://researcharchive.vuw.ac.nz/xmlui/bitstream/handle/10063/1012/thesis.pdf?sequence=2, p. 14.*

հետ[7]: Առանձնացվում են բարոյական 16 հիմնական արժեքներ, որոնք պետք է պարտադիր ուսուցանվեն կամ անուղղակիորեն ձևավորվեն դպրոցի բոլոր ուսումնական առարկաների միջոցով: Դրանք են՝ կարեկցանքը, ինքնավստահությունը, համեստությունը, հարգանքը, սերը, արդարությունը, ազատությունը, քաջությունը, մտավոր և ֆիզիկական մաքրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, համագործակցությունը, զսպվածությունը, երախտագիտությունը, մտավոր կարողությունները և հասարակական գիտակցությունը[8]:

Այսպիսով, այդ երկրներում կարևորում են անձի բարոյական դաստիարակությունը և դրա համար կատարում են հստակ աշխատանքներ, մասնավորապես, բարոյագիտական որևէ առարկայի ուսուցում, այդ առարկաների համար ուղեցույցների պատրաստում, որոնք ուսուցչին հնարավորություն կտան ավելի արդյունավետ իրականացնել առարկայի դասավանդումը, ինչպես նաև ուսումնական այլ առարկաների միջոցով բարոյական արժեքների ձևավորումը: Այս աշխատանքներին օժանդակելու նպատակով ստեղծվել են զանազան կառույցներ՝ դպրոցներին տրամադրելով նյութեր, նախագծեր, որոնք նպաստում են սովորողների բարոյական դաստիարակությանը և համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը: Այդպիսին է, օրինակ, Random acts of kindness foundation (RAK) հիմնադրամը (հիմնադրվել է 1995 թ. ԱՄՆ-ում), որի գլխավոր նպատակն է աշակերտներին օգնել բարի լինելու և հպարտանալու դրանով[9]: Նմանատիպ նախագիծ է նաև Ethika-ն (Ethics and values education in schools and kindergartens), որը մանկապարտեզներին, դպրոցներին, ուսուցիչներին և աշակերտներին տրամադրում է աշակերտների բարոյական արժեքների ձևավորմանն օժանդակող նյութեր: Գլոբալացումով, միգրացիայով և այլ հանգամանքներով պայմանավորված՝ հասարակությունը կրում է փոփոխություններ, որոնք անդրադառնում են նաև կրթության ոլորտի վրա: Այն փոփոխությունները, որոնց մենք հանդիպում ենք Եվրոպայում, ոչ միայն տնտեսական և քաղաքական են, այլ նաև սոցիալական, մշակութային և հատկապես բարոյական: Ethika-ն օգնում է դպրոցներին՝ տրամադրելով տարբեր տարիքի երեխաների և ուսուցիչների համար կրթական մեթոդներ ու միջոցներ՝ մշակված բարոյական երկընտրանքների, կոնֆլիկտների լուծման, առարկայի բարո-

---

[7] **Vishalache Balakrishnan.** *The Development of Moral Education in Malaysia, Asia Pacific Journal of Educators and Education, Vol. 25, 2010, p. 99.*

[8] **Chang Lee Hoon.** *Revisiting the Values in Moral Education for Malaysian schools, Journal of Research, Policy & Practice of Teachers and Teacher Education, Vol. 3, No. 2, December 2013, p. 51.*

[9] https://www.randomactsofkindness.org/

յագիտական մասի հագեցման, քննադատական մտածողության ձևավորման, էթիկա-կան նորմերի զարգացման և այլ հարցերով զբաղվելու համար[10]: Ethika-ի հետ համագործակցում են Եվրոմիության տարբեր երկրների, մասնավորաբար Իտալիայի, Սլովենիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Խորվաթիայի, Ավստրիայի, Բոսնիա և Հերցեգովինայի կրթական, հասարակական հաստատությունները: Նշենք, որ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը այս ծրագրի հարակից գործընկերն է:

Ուսումնական առարկաների նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելը, դրանց միջոցով բարոյական տարբեր արժեքներ ձևավորելը education.com կայքի հիմնական նպատակներից են: Այստեղ պարբերաբար տեղադրվում են խնդիրներ, վարժություններ, խաղեր, աշխատանքային այլ նյութեր՝ կազմված ուսուցիչների, ծնողների, կրթության մասնագետների կողմից:

Հայաստանի Հանրապետությունում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչում՝ որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Քանի որ գիտելիքների և կարողությունների հետ միասին հանրակրթությունը ձևավորում է նաև սովորողի արժեհամակարգը, ուստի այնտեղ ներառվում են նաև բարոյական արժեքներ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատ-րաստվածությանը ներկայացվող ընդհանրական պահանջների մեջ առանձին կետով նշվում են այն արժեքները (նաև՝ բարոյական), որոնք պետք է տա միջնակարգ դպրոցը՝ ըստ ուսումնական բնագավառների և կրթական աստիճանների:

Սակայն մեր հանրապետության հանրակրթական համակար-գում բարոյագիտության վերաբերյալ պարտադիր ուսումնական առարկա նախատեսված չէ. բարոյագիտությանը նվիրված առանձին նյութեր ընդգրկված են «Հասարակագիտություն» ուսումնական առարկայում (որպես դրա առանձին բաժին): Ավագ դպրոցի X դասարանի աշակերտների համար այն ընտրովի դասընթաց է, որին հատկացված է շաբաթական 1 ժամ: Դրա նպատակներն են՝ «սովորողներին ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողների պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել հայ պատանու բարոյափիլիսոփայական

[10] http://www.ethics-education.eu/home/index.htm

աշխարհայացքի ձևավորմանը»[11]*: Առարկան ներառում է 18 թեմա, որոնց լիարժեք ուսումնասիրությունը կարող է ծառայել իր նպատակին: Սակայն, քանի որ այն ընտրովի է, ուստի այդ խնդրի լուծման հիմնական ճանապարհը հանրակրթական առարկաների դասավանդման ընթացքում արժեքների հետևողական ձևավորումն է:*

Արժանին հատուցելով պետական և առարկայական չափորոշիչների հեղինակներին՝ հարկ է նշել, որ դրանցում առկա նյութը արժեհամակարգի մասով համակարգված բնույթ չի կրում: Ավելին, դրանց հիման վրա ստեղծված դասագրքերում քիչ են արժեհամակարգի ձևավորմանը վերաբերող նյութերը: Ընդհանրապես հանրապետության մանկավարժական և մեթոդական միտքը լիարժեքորեն չի անդրադարձել այդ խնդրի լուսաբանմանը: Անշուշտ, կան ուսումնասիրություններ, որոնցում քննության առարկա են հենց բարոյական արժեքները: Այսպես, միջին դպրոցի հանրահաշվի դասագրքերում հեղինակը (Հ. Միքայելյան) հատուկ ուշադրություն է դարձրել կիրառական հենքի ընտրությանը: Դրանցում տեղ են գտել նաև կոնկրետ բարոյական արժեքների ձևավորմանն ուղղված նյութեր, ներկայացվում են մաթեմատիկայի ուսուցման գործընթացում բացասական բարոյական արժեքների ձևավորման հնարավորությունները և դրանց կանխարգելման ուղիները:

Ուսուցչի գործունեության ընթացքում բացասական բարոյական որակներից մեկը, այսպես կոչված, կրկնակի անարդարության դրսևորումն է: Այն տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը պարտավորություններ է վերցնում մյուսի հանդեպ և ոչ միայն խախտում է դրանք, այլև այդ պարտավորությունների հետ իրեն տրված արտոնություններն ու դիրքը օգտագործելով՝ մյուսին վնասում է հենց այն բանում, ինչից ինքը պետք է զերծ պահեր նրան: Ա. Շոպենհաուերը կրկնակի անարդարություն է համարում, երբ սպանությունը իրականացնում է թիկնապահը, երբ գողությունը կատարում է պահակը, կամ խնամակալը յուրացնում է իրեն վստահված սեփականությունը, երբ դատավորը կաշառվում է, և այլն[12]*:*

Ուսուցչի կողմից կրկնակի անարդարությունը աշակերտի հանդեպ կարող է դրսևորվել հետևյալ կերպ: Կրթությունը կազմակերպող կողմը (պետություն, կազմակերպություն կամ անձ) սովորաբար կրթական ոլորտին հատկացումներ է անում ըստ աշակերտների թվի, այսինքն՝ յուրաքանչյուր աշակերտ ստանում է

---

[11] *«Բարոյագիտություն» առարկայի ծրագիր (Մարդ և հասարակություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2013, N 5, էջ 3):*

[12] *Տե՛ս* Шопенгауэр А. *Афоризмы житейской мудрости, М., 1990:*

ֆի-նանսավորում, և ուսուցիչն էլ պարտավոր է յուրաքանչյուր աշակերտի հատկացնել իր ժամանակի, ուշադրության որոշակի՝ այդ աշակերտին հասանելիք մասը: Եվ եթե նա ինչ-որ աշակերտի անընդհատ պահում է ուշադրության կենտրոնում՝ մշտապես հարցնում է դասը, հրավիրում է գրատախտակի մոտ, իսկ մյուս աշակերտը ընդհանրապես դուրս է մնում ուսումնական գործընթացից, ապա այդ գործընթացն իրականացնող անձը՝ ուսուցիչը, կատարում է գործողություններ, որոնք այդ աշակերտին վանում են իրեն հասանելիք արժեքները ստանալու իրավունքից, նրա մեջ ատելություն է առաջացնում այդ արժեքների, ինչպես նաև կրթության և ուսուցչի նկատմամբ, աշակերտին օտարում է կրթությունից: Եվ այդ օտարումը կատարում է այն անձը, որը կոչված է կրթության նկատմամբ սեր արթնացնելու աշակերտի մեջ: Սա կրկնակի անարդարություն է ուսուցչի կողմից: Մասնավորապես, մաթեմա-տիկայի դասավանդման գործընթացում ուսուցչի նման վերաբերմունքը ավելի արագ է հասցնում «արդյունքի»: Իսկապես, մաթեմատիկական կառույցը, որ ուսումնասիրվում է համապատասխան ուսումնական առարկաների միջոցով, ունի կուռ տեսք, հասկացություն-ները սահմանվում են մեկը մյուսի միջոցով, յուրաքանչյուր պնդում օգտագործվում է հաջորդ պնդումների մեջ, և որոշ փաս-տերի կամ հասկացությունների չիմացությունը կարող է հանգեցնել առարկայի ուսուցման ձախողմանն ընդհանրապես: Եվ պատա-հական չէ, որ աշակերտների շերտավորումը, ըստ գիտելիքների և ուսուցիչ-աշակերտ փոխհարաբե-րությունների, ինչպես նաև աշա-կերտների գիտելիքների բևեռացումը ավելի շատ նկատվում են հենց մաթեմատիկայի ուսուցման բնագավառում:

Ուսուցչի և աշակերտի փոխհարաբերություններում դրսևորվում են նաև ուրիշի հանդեպ հարգանքի և պարտքի զգացմունքները: Աշակերտի հանդեպ ցուցաբերելով հանդուրժողականություն, բարեհաճություն, մարդասիրություն և կարեկցանք՝ ուսուցիչը նրա մեջ սերմանում է այդ հատկանիշները՝ զերծ պահելով նախանձից ու չարախնդությունից: Հարգանքին հակասող գծեր են մեծամտությունը, այլատեցությունը և չարախոսությունը: Այս երևույթները կարող են դրսևորվել ուսուցման գործընթացում՝ ինչպես ուսուցիչ-աշակերտ, այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում: Բացասական բարոյական որակների ձևավորմանը կարող են հանգեցնել նաև հուշելը, տնային առաջադրանքներն արտագրելը և նմանատիպ այլ արարքներ: Եվ քանի որ բարոյականության ոլորտում վարքը առաջնային է համարվում գիտակցության նկատմամբ, ուստի նմանատիպ երևույթները բացառելու համար ուսուցիչը առաջին հերթին պետք է դիմի աշակերտների բարոյական գիտակցությանը՝

բացատրելով հուշելու, տնային աշխատանքը արտագրելու և այս կարգի արարքների վնասակար հետևանքները, այլապես սովորողը չի հրաժարվի դրանց հանգեցնող գործողություններ կատարելուց:

Այսպիսով, ուսումնական գործընթացում կարևորվում են ոչ միայն բարոյական արժեքների ձևավորումը, այլև բացահայտվում դրանց իրականացման եղանակները:

ФОРМИРОВАНИЕ НРАВСТВЕННЫХ ЦЕННОСТЕЙ В УСЛОВИЯХ ГУМАНИТАРНОГО ОБРАЗОВАНИЯ

МИКАЕЛЯН Г. С., ЕНОКЯН А. В.

Резюме

Постоянно меняющиеся условия жизни выдвигают новые требования к образованию. Одним из таких требований является формирование ценностной системы и, в частности, нравственных ценностей учащихся. Ряд стран пытается решить эту проблему путем введения этических дисциплин в средних школах и создания общественных организаций и фондов, которые способствуют решению проблемы путем предоставления школам соответствующих материалов. Работы, проводимые в этом направлении в нашей стране, в основном посвящены изучению формирования нравственных ценностей в процессе обучения математике.

FORMATION OF MORAL VALUES IN THE CONDITIONS OF EDUCATION IN THE FIELD OF HUMANITIES

H. MIKAELYAN, A. YENOKYAN

Abstract

The constantly changing conditions of life dictate new requirements to education. Among these requirements is formation of learners' value system and, in particular, formation of moral values. Some countries try to solve this problem introducing ethical subjects in public schools or creating public organizations and foundations, which can help schools to solve this problem providing them corresponding materials. Researches, which done and are doing to solve this problem in our country, are mainly devoted to the study of formation of moral values in the teaching process of mathematics